

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունները, ի դեմս՝ կառավարությունների, այսուհետ՝ Կողմեր,
ելնելով Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ իրենց քաղաքացիների առողջության պահպանման բնագավառում համագործակցության կարելոթությունից,
ցանկանալով նպաստել բնակչությանը բուժօգնություն ցուցաբերելու բնագավառում համագործակցության զարգացմանն ու խորացմանը, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈՂՎԱԾ 1

Սույն Համաձայնագրի նպատակների համար ստորել բերված հասկացություններն ունեն հետեւյալ նշանակությունը.

"Համագործակցության պետություն"՝ պետություն, որը մտնում է Անկախ Պետությունների Համագործակցության մեջ եւ հանդիսանում է սույն Համաձայնագրի մասնակիցը,

"մշտական բնակչության պետություն"՝ պետություն, որի քաղաքացին է հանդիսանում հիվանդը եւ որտեղ նա մշտապես բնակվում է,

"Ժամանակավոր բնակչության պետություն"՝ պետություն, որն իր քաղաքացին չհանդիսացող հիվանդին տրամադրում է բժշկական ծառայություն,

"ուղարկող երկիր"՝ Համագործակցության պետություն, ի դեմս առողջապահության նախարարության, որն իր քաղաքացիներից մեկին ուղարկել է Համագործակցության մեկ այլ երկիր՝ բուժօգնություն ստանալու նպատակով,

"ընդունող երկիր"՝ Համագործակցության պետություն, որն ապահովում է բժշկական ծառայության տրամադրումը Համագործակցության մեկ այլ պետության քաղաքացիներին,

"շտապ եւ անհապաղ բուժօգնություն"՝ բժշկական ծառայությունների համալիր, որը ցուցաբերվում է հիվանդի ֆիզիկական կամ հոգեկան առողջության սուր խախտումների դեպքում, որոնք սպառնում են նրա կյանքին կամ շրջապատողների առողջությանը,

"պլանային բուժօգնություն"՝ բժշկական ծառայությունների համալիր, որը ցուցաբերվում է հիվանդի ֆիզիկական կամ հոգեկան առողջության սուր խախտումների դեպքում, որոնք անմիջական սպառնալիք չեն ներկայացնում նրա կյանքի կամ շրջապատողների առողջության համար:

ՀՈՂՎԱԾ 2

Հանկարծակի սրված վիճակների եւ հիվանդությունների դեպքում, որոնք սպառնում են հիվանդի կյանքին կամ շրջապատողների առողջությանը, դժբախտ պատահարների, թունավորումների, վնասվածքների, ծննդաբերության եւ հղիության ընթացքում անհետաձգելի իրավիճակների դեպքում շտապ կամ անհապաղ բժշկական օգնությունը քաղաքացիներին ցուցաբերվում է առանց որեւէ խոչընդոտի, անվճար եւ լրիվ ծավալով՝ ժամանակավոր բնակչության պետության տարածքում, բուժկանխարգելիչ հաստատությունների (այսուհետ՝ ԲԿՀ) կողմից՝ անկախ կազմակերպչաիրավական ձեւերից, գերատեսչական պատկանելությունից եւ նրանց սեփականության ձեւերից:

Սկսած այն պահից, երբ արդեն վերացվել է հիվանդի կյանքին կամ շրջապատողների առողջությանը սպառնացող վտանգը եւ հնարավոր է նրա տեղափոխությունը, բժշկական օգնության ցուցաբերումը կիրականացվի վճարովի հիմունքներով:

Հիվանդի անվտանգ տեղափոխության հնարավորությունը որոշվում է բժշկական օգնություն ցուցաբերող ԲԿՀ-ի կլինիկական-փորձագիտական հանձնաժողովի կողմից,

որն էլ կրում է տեղափոխության վերաբերյալ եզրակացության ճշտության իրավաբանական պատասխանատվությունը:

ՀՈԴՎԱԾ 3

Ժամանակավոր բնակության պետությունում քաղաքացիներին պլանային բժշկական օգնություն ցուցաբերվում է վճարովի հիմունքներով, ըստ պայմանագրային գների կամ գործող գնացուցակի փոխհաշվարկներ կատարելով:

Պլանային բուժօգնության այս կամ այն տեսակի տրամադրման համար հիմք է հանդիսանում համապատասխան բժշկական փաստաթղթերի եւ բուժօգնության փաստացի արժեքի վճարման մասին ուղարկող երկրի երաշխիքային պարտավորության առկայությունը:

Նշված փաստաթղթերի բացակայության դեպքում պլանային բուժօգնությունը ցուցաբերվում է բուժման կողմնորոշիչ արժեքից ոչ պակաս չափով կանխավճար իրականացնելուց հետո՝ ԲԿԳ-ի եւ հիվանդի կամ էլ նրան ներկայացնող իրավաբանական (ֆիզիկական) անձի միջեւ հետագա փոխհաշվարկ անցկացնելով:

Առանձին դեպքերում, Կողմերի պայմանավորվածությամբ, ծանր հիվանդություններով տառապող անձանց պլանային խորհրդատվական եւ բուժախտորոշիչ օգնություն կարող է ցուցաբերվել այլ պայմաններով:

ՀՈԴՎԱԾ 4

Ժամանակավոր բնակության պետության տարածքում պաշտոնապես փախստական ճանաչված անձանց պլանային բուժօգնություն ցուցաբերվում է տվյալ երկրի օրենսդրությամբ սահմանված կարգով եւ պայմաններով:

ՀՈԴՎԱԾ 5

Ժամանակավոր բնակության պետությունում մշտապես բնակվող եւ Համագործակցության այլ պետությունների քաղաքացիներ հանդիսացող անձանց, սույն Համաձայնագրի 2-րդ, 3-րդ, 4-րդ եւ 8-րդ հոդվածներին համապատասխան, ցուցաբերվում է բժշկական օգնություն՝ կացության քարտի հիման վրա:

ՀՈԴՎԱԾ 6

Չինծառայողներին, զինված ուժերի բանվորներին եւ ծառայողներին, որոնք մտնում են խաղարար ուժերի սահմանափակ կոնտինգենտի մեջ, ինչպես նաեւ նրանց ընտանիքի անդամներին ցուցաբերվում է անհրաժեշտ բժշկական օգնություն ժամանակավոր բնակության պետության ԲԿԳ-ում՝ քաղաքացիների այդ կատեգորիաների համար բուժսոցիալական երաշխիքների մասին գործող միջազգային պայմանագրերին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 7

Ժամանակավոր բնակության պետությունում պայմանագրով (աշխատանքային պայմանագրով) աշխատող քաղաքացիների պլանային բժշկական օգնությունն իրականացվում է գործատուի միջոցների հաշվին՝ պայմանագրով նախատեսված կարգով եւ ծավալով, կամ քաղաքացիների անձնական միջոցների հաշվին:

Ժամանակավոր բնակության պետության քաղաքացիների աշխատանքային գործունեության հետ կապված մասնագիտական հիվանդությունների կամ արտադրական վնասվածքների բուժման վճարումն իրականացվում է գործատուի միջոցների հաշվին՝ այդ պետության օրենսդրությամբ նախատեսված կարգով եւ պայմաններով:

Սույն դրույթը տարածվում է սահմանամերձ շրջաններում բնակվող եւ սահմանակից Կողմերի տարածքում աշխատող քաղաքացիների վրա:

ՅՈՒՂԱԾ 8

Հիվանդության եւ վնասվածքների ժամանակ աշխատունակության կորստի փորձաքննությունն իրականացվում է ժամանակավոր բնակության պետության տարածքում, տվյալ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ժամանակավոր բնակության պետության ԲԿՅ-ի կողմից տրված եւ հիվանդությունների եւ վնասվածքների դեպքում քաղաքացիների ժամանակավոր անաշխատունակությունը հաստատող փաստաթուղթ հանդիսանում է բոլոր Կողմերի կողմից ճանաչված անաշխատունակության թերթիկը, որը հետագայում մշտական բնակության պետության ԲԿՅ-ի կողմից փոխարինվում է ժամանակավոր անաշխատունակությունը հաստատող այդ պետությունում ընդունված նմուշի փաստաթղթով:

Աշխատունակության կայուն կորստի դեպքում ժամանակավոր բնակության պետության ԲԿՅ-ն ներկայացնում է բոլոր Կողմերի կողմից ճանաչվող փաստաթուղթ (առաքման թերթիկ) հիվանդի մշտական բնակության պետության կամ ժամանակավոր գտնվելու վայրի պետության աշխատունակության փորձաքննության մարմիններ:

ՅՈՒՂԱԾ 9

Նախկին ԽՍՀՄ-ի Կառավարության հաստատած եւ Համագործակցության պետությունների կողմից ճանաչված քաղաքացիների բժշկական եւ դեղորայքային ապահովվածության գեղչերը ապահովվում են մշտական բնակության պետության կողմից, ազգային օրենսդրությամբ սահմանված կարգով եւ պայմաններով:

ՅՈՒՂԱԾ 10

Կողմերը, համաձայնեցնելով Համագործակցության մասնակից պետությունների շահագրգիռ նախարարությունների եւ գերատեսչությունների հետ, Անկախ Պետությունների Համագործակցության առողջապահության բնագավառում համագործակցության գծով Խորհրդի կհանձնարարեն պատրաստել կոնկրետ առաջարկներ սույն Համաձայնագրի իրականացման վերաբերյալ եւ սահմանված կարգով դրանք ներկայացնել Անկախ Պետությունների Համագործակցության Կառավարությունների ղեկավարների խորհրդի նիստի քննարկմանը:

ՅՈՒՂԱԾ 11

Համագործակցության մյուս պետություններ ուղարկվող բժշկական փաստաթղթերը լրացնելու համար պաշտոնական լեզուն ռուսերենն է:

ՅՈՒՂԱԾ 12

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից, իսկ այն պետությունների համար, որոնց օրենսդրությունը պահանջում է նրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարում՝ ավանդապահին համապատասխան ծանուցումը հանձնելու օրվանից:

ՅՈՒՂԱԾ 13

Սույն Համաձայնագիրը կարող է փոփոխվել եւ լրացվել Կողմերի ընդհանուր համաձայնությամբ:

ՅՈՒՂԱԾ 14

Սույն Համաձայնագիրը գործում է նրա ուժի մեջ մտնելու պահից հինգ տարվա

ընթացքում: Ժամկետը լրանալու պահից այն ինքնաբերաբար երկարաձգվում է ամեն անգամ հինգ տարով, եթե Կողմերը այլ որոշում չընդունեն:

ՀՈԴՎԱԾ 15

Յուրաքանչյուր Կողմ կարող է դուրս գալ սույն Համաձայնագրից՝ դուրս գալուց առնվազն վեց ամիս առաջ գրավոր ծանուցում ուղարկելով եւ կարգավորելով Համաձայնագրի գործողության ընթացքում ծագած պարտավորությունները:

ՀՈԴՎԱԾ 16

Սույն Համաձայնագիրը բաց է նրա նպատակներն ու սկզբունքները կիսող այլ պետությունների կողմից միանալու համար՝ այդպիսի միացման մասին փաստաթուղթը ավանդապահին հանձնելու միջոցով:

Կատարված է Մոսկվա քաղաքում 1997 թվականի մարտի 27-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության Գործադիր քարտուղարությունում, որը Համաձայնագիրը ստորագրած պետություններից յուրաքանչյուրին կուղարկի դրա հաստատված պատճենը:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2000 թվականի ապրիլի 27-ից: